

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԱԿԻՑՆԵՐԻՆ

Մարդկայն սեղ անհատները զանազանում են միմանցից ըստ զարգացման և ըստ պարագման, բայց մի կողով կայ, որ մարդ անուան ենան սերտ և անքանելի կերպով կապակից է, որով և բոլոր մարդոց մի անձանազանելի միանմանութեան է բերում: Այդ կոչումն է աշխատութիւնը:

Աշխատութիւնը՝ կ կատարումն կենսական պահանջմանց: Մարդու կեանքը կայանում է Բոգույ, մարմնոյ և մտաց միավորութեան մէջ, ուստի և կենսական պահանջմունքները որքան մարմնական են, մի նոյնքան ևս հոգեկան են և մոտարական: Մեր եղինակին Տէրը, որ իր անսահման սիրովը հախախնամում է բոլոր արարածներին, իսկ մարդուն առաւել ևս սիրելով Բանորդակից է արել Իրեն և երկրի վերաց թագաւոր կարգել նորան, այսքան սիրելոց յատոյ, աշխատութիւնը իրուն թշուառութեան աղքիր չէ դրան մեր բնոյեան մէջ, այլ իրուն մի բնական պահանջմունքը: Այն բոլոր բնական պահանջմունքները որ ունինք մենք, դոցա ոչ թէ կատարելն է թշուառացնում մեզ, այլ չկատարելը և վաստ կատարելը: Ինչո՞ւ որպահանում ենք մենք, երբ պատահում ենք մեր տարիներով անշատուած ծնողին, բարեկամին, հայրենակցին: Այդ թշուառութիւնն է միթէ Արարշից շնորհած մեր հոգուն: Բայց պարու է գիտել, որ ետք մարդու միտքը անքարա չէ զարգացած, որ կարողաւ տիրել իր հոգեկան կիրքերի վերաց, որևէն և որախութեան, նա կարող է չափազանց որպահանալ, մինչև ուշագնաց լինելու ասիհման, գժուելու, և մեռնելու անգամ: Ինչ որ ասացինք այս հոգեկան պահանջման մասին, նոյնը կարող ենք ասել և մորի և մարմին մասին: Ի՞նչ Բարկաւոր է միտք զրադեցնել այնպիսի խնդրի վերաց, որ գեր ի վեր է մարդկային մոտար կարողութեան սահմանից, և կամ այնքան թեսն դնել մի մէջի վերաց, որ նորա ուժից բարձր լինի և տանել անկարելի: Բայց ի՞նչպէս քաղցր է մոտածի գզալի էակմերի վերաց, ճանաչել նրանց, և

նրանցով նրանց Ստուծողի անսահման մէրը զգալ ու սիրել նորան գիտակցարար՝ ամենայն անձամբ՝ Բոգույ և մորը: Ի՞նչպէս քաղցր է իր տնկած ծառի տակ նստելը, նորան դարմանելը և ամենելը:

Կարծե՛լ որ երշանկութիւնը հանգստութիւնն է, այդ թէ աստուածային և թէ բնական օրինաց դէմ մոլավիչել կնշանակէր, վասն զի ամրոց բնութիւնը « և Բուման և ի ծորման » է, ամենայն տեղ շարժողութիւն է, ամենայն տեղ կեանք է: Եթէ ամենք՝ Աստուած մեզ ատելով է ենթարկէլ աշխատութեան, այդ կը հշանակէր ասել, թէ Աստուած մեզ ատել է, մեր մարմնոյն հոգի կենդանի տաղով և նոցա կառավարելու համար մի միտք. վասն զի պատուի է հանգստութիւնը, որ ոգի՝ կենդանութիւն կամ շարժողութիւն չկայ: Բայց ո՞ւր է պայդիսի մի տեղ բնութեան մէջ. մեր անշնչ բնակարանը անգամ անշնչան շարժողութեան մէջ է իր բոլոր մասունքներովը: Ծառը իր պտղովը, ծաղիկը իր հոտովը, մտղուն իր մեղրովը, շերամն իր մատաքսովը. բոլոր, բոլոր անքան արարածները անգամ ակն յանիման ատում են ծովութիւնը, որ մայր է ամենայն չարեաց, և ապացուանում աշխատութեան անհրաժեշտ կարևորութիւնը և երշանկութեան միակ աղքիր լինելը: Եթէ բնագրդուար ապրոյ, միակ գիշապահութեան եռուն ընկած մարդուն անապուն ենք նմանեցնում, ապս ուրեմն այն մարդուն, որ իր միակ գոլուսը պահպանելու չափ գործունելութիւն չունի, պէտք է նմանեցնել ցեցի, որ ոստում է առանց աշխատութեան ուրիշի աշխատանքը:

Մեր նպատակը չէ այստեղ բնագրտական մնանով ցոյց տալ, թէ ինչ պատճառներից է յառաջանան ծովութիւնը, և հետևապէս ցոյցանել, թէ ինչ պատմական և բնական պայմանների է կարօտ մի որ և իցէ ծողովորի գործունելութեան ասիհման և կերպ, այլ առ այս կամենում ենք ասել միայն, թէ աշխատութիւնը է երշանկութեան միակ ճանապարհը, և որքան գիտակցարար լինի՝ աշխատութիւնը, այնքան

մասի կը մոտացնէ մարդուն այդ նպատակին: Բայց նաև մարդիկ, որ երևակարութեցից թելադրված, սրբաց անձը ենթարկել էն ծովութեան, պարուն էն առատառալ, որ երշանկութիւն ձեռք թերել միայն աշ-առասութեամբ կարելի է, թէ այս անցաւոր կենցա- ցոյս վերաբերութեամբ և թէ այն: Արքայութիւնն սրբինց բռնարարի և բռունք յափշտակին զնա: Ձէ՞ գր մենք առաքինութեամբ կարող ենք ձեռք թերել թանանց երշանկութիւնը. բայց ո՞վ է լսել, որ առա- ժմինութիւնը մի վերացական բաց լինի և ցնորարա- տութեան նևունաճը: Սուարինութիւնը գործ է, աշ- առասութիւն է, որ իր նմանակցին սիրելու և կարե- լինց լինելու մէջ է կայանում: Եթէ մենք ճշդի կա- տարենք աստուածային այս կենսատու պատուիքը, անշուշն այս կեանիք մէջ ևս կարող ենք երշանկու- թեան մօտենան:

Կարո՞՞ն է միթէ հասարակութեան մի անհատ իր պարդար աշխատութեան պատուղ վայելել, եթէ միւս ողլոր անհատութեար գործ և ծոյլ մարդիկ են: և եթէ մասսարակութեան մի անդամը, կարծելով որ միմի- րայն նիւթական նոխութեամբ կարող է հասնել եր- աշխատութեան, և այդ կարծիքը իրեն համար մի նոր ժիշտ համարելով, ուզում է հասնել այդ նախառակին նույնուրույնարար, դա պիտի հախանձի անշուշն իր ընկերի բաղդի վերայ, պիտի ամենայն ջանք ի գործ գնել, որ նա ևս շնորհանայ, որպէս զի ինքը միշտ սեմբանմաս բարձր մնայ նորանից: Եւ ապախի վերապէտ հարստացած մարդը մի՞թէ երշանկութեան մօտեցան կը համարիի: Ամեննին ո՞չ. վասն զի եր- շանկութիւնը մնատող չէ և ոչ մետաքս, այլ հաւա- րակաշոռութիւն պահպանել է հոգեկան, մարմնա- յան և մոտարական պահանջմանց մէջ: Եթէ այդ պահանջմանց կատարելով միայն կարելի է մօտե- նալ երշանկութեան, ապա ուրեմն որքան ընդհան- ուական լինի այդ ձգտողութիւնը, որքան ընկերական, այնքան շուտ կը մօտեցնէ մարդուն իր նախառակին: Մենք չենք կարող մի զրկանք հասցնել մեր ընկե- րին, և համգխան խճանտաքով մեր հոգին վեր ուղ- ղել դէայի Արարշի աթոռը, և եթէ այդպէս անենք, որին պատիժ կընդունինք կրկնապատկերով մեր սուճմտանիք տանշանքը. վասն զի՞ երթ, կառէ, նախ նաշտեանց ընդ երօր քում..... վասն զի՞ զԱսո- ուած, զոր ոչ տեսանեն, զի՞արդ կարիքն սիրել...

Վերջապէտ ասել կամեցանք պարան խօսելով, թէ աշխատութիւնը մի բնական պահանջմունք է՝ մար- դուս բնութեան մէջ դրած ի սկզբանէ անտի Արար-

չագործի ձեռամբ, թէ չկայ մարդ, որ ազատ լինի այդ օրէնքից, և թէ դա մարդկային սեղ երշանկու- թեան մօտեցնող միակ գործին է, թէ անցաւոր կեն- ցաղոյս վերաբերութեամբ, և թէ անաց:

Այն բոլոր միջոցները, որոնք համարվում են լու- սաւորութեան միջոցներ, ծառայում են այդ նպա- տակին. ցոյց են տախի փորձով և բանի, թէ ի՞նչ- պէս աւելի դիրագոյն է, յարմարաւոր է, բնական է, վայելու է և, վերջապէտ, օգտական աշխատել:

Պարքերական ներթը լինելով լուսաւորութեան գործիններից մինը, արձակ ճանապարհ ունի մտնե- լու ընդհանուրի մէջ և նորան իր մուաց զարգաց- ման աստիճանին լարմար սեղնդ տպու և հաս- կացնելու, թէ ինչպէս պիտոյ էր աշխատել:

Ենք առնելով Արարատի երկրորդ տարվան ըն- թացքի դեկը, զգում ենք, որ այդպիսի մի պարու- տութիւն և մուգ վերայ կայ կատարելու մեր ժողո- վըրդեան մէջ. հայ ժողովրդեան եւ ասում, որին երբ համեմատում ենք այլ ժողովրդոց նետ, բոլորվիմք տարրեր ենք զանուտ նորան թէ՝ ըստ բաղարակա- նին և թէ ըստ մտարականին և բարոյականին: Մեր խորին ուշադրութիւնը դարձնելով այս տարքե- րութեան վերայ, մենք նկատում ենք, որ ոչ անե- նայն աշխատութեան կերպ, որ գործ է դնում որիշ ազգ, կարող է գործ դնել և Հայ ազգը, բայց ինչ կերպ որ ամենակարևորագոյնն է և անթամեջու հարկաւորը, այն կարող է գործ դնել և Հայը: Այդ կերպն է՝ երկայնամտութեամբ և միարանական սի- րով աշխատել: Միարանական սէրը պէտք է լինի ինման մեր աշխատութեանց, ընդհանուրի օգուտը նո- րա վերայ կառուցած: Ուրախութեամբ սրտի մենք նկատում ենք, որ այս պատուական ձգտողութիւնը այժմ ամեն Հայի մէջ էլ զարթել է ուսման և կրթու- թեան կարևորութիւնը ձայն բազմաց է դստել. սա- կայն ցաւելի է նկատել, որ շատ տեղերի յառաջըն- թացութիւն անհիտակցարար և աննպատակ է....

Արարատը այս նկատողութիւնը անելով իր սիրե- լի որդոցը, պիտի աշխատ և ինքը, ընդհանուր ազ- գի օգուտը և բարին գերադասելով ամեն բանից: Արարատը իր ամեն ջանքը պիտի գործ դնէ լինել այնպիսի մի պատկեր, որոյ մէջ Հայը կարողանայ տեսնել իր անցեալ և ներկան, և յուսով է, որ իր հարազան որդոց լուսաւորեալ մասը ամենայն կեր- պով դիրութիւն կը տայ այդ նպատակին մօտենա- լու:

(«Արարատ», 1869, մայիս, էջ 1)

